

30 ԲԱՐՈ

ՄԷԾՄՈՒՄԻ ԱՆՊԱՐ

50 ԲԱՐՈ

DIRECTION DU JOURNAL

MEDJMOUA-I-AHBAR

65, Grnd'rue de Pera, Taksim, 65

ԱՊՐԱՆՈՒՄԻ ԶԵՆՈՒՄԻ ԶԵՆՈՒՄԻ 6 ԲԱՐՈ
Խաղաղութիւնի 6 ԲԱՐՈ
Խաղաղութիւնի 6 ԲԱՐՈ
Խաղաղութիւնի 6 ԲԱՐՈ

20 ԲԱՐՈՒՆԻ ԶԵՆՈՒՄԻ ԶԵՆՈՒՄԻ

ԿԻՆԵՄԱՏՈՐ ԶԵՆՈՒՄԻ ԶԵՆՈՒՄԻ

Կապալի ինքնաշարժի 6 ԲԱՐՈ

مجموعة اخبار

بكاوغلى قديم جادهسى نومرو ٦٥

ՔՆՆԱՐԱՏՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՐԱՐՈՒՄԻ ԶԵՆՈՒՄԻ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻՆ

9.

(4844 թիւին շարունակութիւն)

Իսկ զայնով 16րդ յօդուածի, չկրցայ հասկնալ թէ ինչ նկատուածով շարադրուած է այն: Կարգաւոր. «Յօդ. 16. — «Եթէ երեք ընտրութիւններն մին և եւ պատճառով մը հրաժարի կամ պակտի, ընտրութիւնը չիղեալ համարելով նոր եռանուն ցանկ մը կը քուէարկուի»: Բոլոր ժողովներն, յանձնաժողովներն և խորհուրդներն կ'ընտրուին առաւելագոյն քուէ վաստկողներէ կարգաւոր. մինչ ասանցմէ մին հրաժարի կամ պակտի, հրաժարողին տեղ առաւելագոյն քուէից կարգաւոր կուգան, կ'անդամակցին: Մէկ կողմանէ ընտրութիւն այս գործընթացը իր վարչական ձեւակերպութիւն, միւս կողմանէ մերժել, զայն, կարելի չէ, հոգ չէ թէ մին Կ-Պատրիարքի և միւսն ալ պարզ լծադակների մը ընտրութեան համար եղած ըլլայ: Որքան ալ Ընդհ. ժողովը՝ ժողովներու, յանձնաժողովներու և խորհուրդներու անդամներու ընտրութիւնն իւր ձեռնհասութեան սահմանին մէջ կը գտայ, կ'ընտրի և կը կարգէ, բայց այսպէս չէ Կ-Պատրիարքի մը համար որուն ընտրող ըլլալու հանգամանքը ըստ չունի, այլ վկայող, և մեր վկայութիւնն ինչո՞ւ ընտրութիւններուն չորրորդին համար չգտնէ երբ անոնցմէ մին հրաժարի: Գոնէ ես վարչական ձեւակերպութեանց միտքով ընտրութիւն չեմ տեսներ այս գործին մէջ:

Մասնաւոր որ ասոր մէջ կան նաեւ կարգ մը անպատեհութիւններ՝ որոնք չեմ ուզեր հոս գրի առնել, մաքրու պղտորում յառաջ չեմ երեւում համար:

Բայց ամենէն աւելի յուշադրուած մ'ունենցոր են Կանոնադրութեան վերաբերելի Յանձնաժողովի յարգելի անդամը, հին, այսինքն հատուկեան ժամանակ գրի առնուած ծրագրին Յօդ. 13ին և վերջին ձեւագիրը յաւելումներ կրած ծրագրին Յօդ. 12ին, որոնք բառ առ բառ նոյն են, այսինքն ընտրութեան պայմանները ճշգրտորէն Կարգաւոր մասին լուսարարութեամբ: Կարգաւոր զայն. «Յօդ. 12. — Ընտրութեան ցուցակին կազմութեան համար պէտք է որ Եկեղեցական և Ընդհ. ժողովներու ամբողջ անդամաց 2/3 մասը ներկայ գտնուի և ներկայ անդամաց 2/3 ին առաւելութիւնը գոյանայ»: Այս արամադրութիւնն անհրաժեշտ է ապագային բաց դուռ չձգելու համար:

Դարձեալ ուրիշ կէտ մը որ հաւանաբար գիտակցութեամբ վրիպած է անոնց աչքէն. հին կրկնակ ծրագրերն ալ սապէս նախադասութիւններ կը պարունակեն. «Սինդոնոսի վրայ որ և է արտաքին, նիւթական կամ բարոյական ճնշումն խտրութեանը առիթ է»: «Սինդոնոսի վրայ որ և է ճնշումն խտրութեանը առիթ է»: Իրական մէջ սա խօսքերն կան այս մասին «... Հէյնթը մէջքիւրէնէ խորհածն պիտի կէտնա միւս տախէն վուգու պուլմագըզըն ինթի-խապ օլընարտը...»: Իսկ վերոյիշեալ հրաժարագրին մէջ սա կերպ պարզուած է լայն «... Առանց սեղմելու և կաշկանդելու

լու գերիշխանութիւնը և ազատութիւնը Սինդոնոսի, որ ինչպէս միշտ լեզած է, միշտ անեղծ պահուելու է»: Յանձնաժողովի յարգելի անդամը պէտք էին գիտնալ այս բացայայտ հրամանները, և աստ ասոր համար գիտակցութեամբ յուշադրութեամբ ըսի քիչ մը վերը:

Այս նկատման պիտի վերագրեմ նաեւ Յանձնաժողովի անդամաց (Կրիկիտ) լուսին զանցաւորութիւնը: Սին Կաթողիկոսն Տանն Կրիկիտ է և Պատրիարքն՝ Կ. Պոլսոյ: Այս կերպ կը խօսին թէ իրական և թէ վերջապէս հրամանագրին: Եթէ Կրիկիտը բառով, Կաթողիկոսութեան իրաւասութիւնն սահմանադրած ըլլալ կը կարծեն, և թէ այսպէսով իւր թիւն մինչեւ արտաւանձմանը չի կրնար երկարել, հոգ չէ: Բայց ինչ կ'ուզէինք եթէ Կրիկիտը Կաթողիկոսաց իրաւասութիւններն սեռած ըլլայինք մեր արդի Կ-Պատրիարքներու վրայ: Անոնք մեր գոյութեան պահպանման լիուրի կրնային նպաստամտաց ըլլալ:

Յօդ. 17ի մէջ չեմ գիտեր ինչ նկատումով «2/3 քուէից առաւելութեամբ Կ-Պատրիարքն կ'ընտրուի Սինդոնոսի կողմէ» չէ ըսուած, այլ գոնացուած է պարզապէս գաղտնի քուէից առաւելութեամբ ընտրուի: Թիւր սահմանադրութեան վրայ ինչ անպատեհութիւն կայ արդեօք... հարկաւ կը պարզուի վիճաբանութեան ընթացքին մէջ:

Յօդ. 18ի մասին մենք ներկայ յօդուածին սկիզբներն խօսած ենք, չենք ուզեր կրկին անդադարաւորալ:

Յօդ. 19ով Երեսփոխանական ժողովը ինքզինքն ձեռնհաս կը նկատէ Սինդոնոսի հետ Կ-Պատրիարքի ընտրութեան արդիւնքն առ Ս. Գրան Հռովմայ ներկայացնելու:

Հոս իրականաց սահմաններէն դուրս կ'ելլենք. Հռոմ երբեք պաշտօնական մարմին մը չէ ճանչցած Երեսփ. ժողովը, և ճանչնալու ալ պէտք մը չունի, քանի որ պաշտօնական յարաբերութիւն չկայ: Սակայն Հռոմայ՝ Երեսփ. ժողովը պաշտօնական մարմին չի ճանչնալ չի գործը անոր գոյութեան շնորհիւ, քանի որ Հռոմի և Հայաստանի միջեւ հոգեւոր գործող միջնորդ կաթողիկոսն է իւր Սինդոնոսով, մինչ Երեսփոխանական ժողովը պարզապէս քաղաքական մարմին մ'ըլլալով իրեն անկ չէ ներկայացնել հոգեւորապէս պաշտօն ստանձնող անձ մը առ Ս. Գրան, մինչ Սինդոնոսն իրաւունք ունի կրօնական և Երեսփ. ժողովը կողմանէ առ Բ. Գրան մատուցուելիք հանրագրին տակ ստորագրելու, քանի որ Բ. Գրան կը ճանչնայ այդպիսի պաշտօնական մարմին մը գոյութիւնը, որուն մասին իրական մէջ անցքեր կան:

Ասկէց զատ Սինդոնոսական Հայրերուն մեծազոյն մասն պիտաքով առաջնորդներ ըլլալուն հանգամանքով արդէն Բ. Գրան ծանօթ են:

Թ. Կ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Բերա, 15 Յունուար 1911

ՀԱՆՈՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆԲ

ՀԱՅ ԱԶԳԻՆ ԾԱԳՄԱՆ ՎՐԱՅ

Ինչպէս մէջքայինն տէրհինէ պու կ'իւն ելքիմը միւսայիտ օլմատըլընտան, տէվամը կ'էնձէր հաթիմա թափիգ իտիլ-միշ տիր:

ԱԿՆԱՐԿ ՄԸ

ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ

ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պարսկաստանի կեդրոնում հայաբնակ Նոր-Ջուղայում Եան Արամ Մեծի օրին դեռ յառաջ հաստատուած է Կայ-Կաթողիկէ Առաքելութիւն. սակայն Նոր-Ջուղայի Հայ-Կաթողիկէ վանքն հիմնուած է հինց այդ թագաւորի օրովն 1705ին:

Սրանից տասը տարի յառաջ բախտ եմ ունենում այցելել այդ հին աւաւրց կրօնական հաստատութիւնն, որի հովանաւորութեան տակ գտնուած էր Հայ-Կաթողիկէ գաղութը՝ զարդարուած կարեւոր շատ հիմնարկութիւններով, ընդ որս և երկու սեռի դպրոցներով:

Այդ առաքելութիւնն, ինչպէս շատոնց յայտնի է, այն ժամանակ գտնուած էր Կ. Պոլսոյ Հռովմէական Հայ-Կաթողիկէ Պատրիարք-Կաթողիկոսի իրաւասութեան տակ, որում փոխանորդուած էր Վեր. Հ. Յարութիւն Վ. Առաքելեանն, և 40 տարի ետեւը իւր իրաւասութեամբ:

Այժմ անցնում է ասոր տարի, երբ նորէն գտնուած եմ այդ գաղութի միջաւայրում, ուր նկատում եմ զարմանալի փոփոխութիւններ, կատարեալ յեղաշրջում. օտարներն մտցած նրանց խաղաղ վիճակի մէջ, փոխարինելով նոցա ներքին կեանքը, հասցնելով մահացու հարուած Առաքելութեանն ընդհանրապէս:

Կարգինք. Հայ գաղութն իր բովանդակ հիմնարկութիւններով և կաւոնաւորութեամբ, հանդերձ անխնամ ու անխորհուրդ քաղաքականութեան, առաջն Հայ հօտի բազմակողմանի պէտքերը ու հանգամանքները ի նկատի առնելով, յանձնուած է օտարականների, Լազարիսը Միաբանութեան խնամոցն ու հովանաւորութեանն:

Հայը, ինչ դաւանանքի որ պատկառելիս լինի, նա սիրում է Հայ ապրիլ իր կրօնի մէջ անվրդով ու ազատ մնալ, իր հայկական սովորութեամբ պաշտել Արարչին, Հայ կրօնաւորները հովանութեան միայն ենթարկելով, չդաւաճանել Ազգային դարերէ ի վեր դիմօկրատիկ սկզբունքը, իստաղ ու անվրդակի ճանապարհներով յառաջ գնալ, զարգանալ լուսաւորութեան մէջ, իւր դպրոցներով և իւր համեստ միջոցներով, որպէս և իրականապէս ընթանում էր մինչ օրանից տասը տարի յառաջ, այն ինչ դեռ խաղաղ չէր դարձած օտարների ձեռքում և դեռ չէր հասցրուած իրեն այժմեան մահացու հարուածը: Բայց թէ ինչ են արդեօք ստոյգ պատճառներն ու դիմումներն այս կարգէ դուրս գործառնութեան մասին, այդ դեռ մնում է խորհրն գաղտնիք նոյն իսկ դժբախտ ժողովրդին:

Նոր սերունդն, ի բաց առեալ քանի մի շահամոլներին՝ չցանկանալով օտարականների զօհ դառնալ, ստրկանալ նոցա երկրի ընթացքին ու մեքենայութիւններին, խիստ արագ հեռանում է իր նախնեաց վաղեմի կրօնէն, ու յարում է Եւմիւսական կեցեցեցուն, ուր աւելորդ է ասել ընդունում է գրկաբաց. իսկ նախնայից Եկեղեցին ու հիմնարկութիւնները մնում են թափաւր ու բարոյապէս աւերակ:

Ինչո՞ւ այս ամէնն. այս դրութեանից ինչ օգուտ է քաղուում. արդեօք ո՞վ է մեղաւորը, որ այս գոհնակ խաղում է ժողովրդի իրաւունքի հետ, և նոցա դարերէ ի վեր հիմնարկութիւնները դարձնում է աւերակ, յանձնելով օտարականներին, Լազարիսը Միաբանութեանն, ինչ որ Հայ ազգի համար նուիրական է. ինչ որ բնաւ երբեք չէ պատկանում անհատի:

Կրկնում ենք, ո՞վ է մեղաւորը. անշուշտ նոքա, որոնց ձեռքին է ժողովրդի բախտը, որոնք ըստ հանոյ տնօրինում են հլու հնազանդ հաւատացեալների դործերը, որոնք առանց խղճահարութեան ընդ նիւթ թափանին յանձնում են նաեւ օտարականներին Ազգի դարաւոր աւանդները, առանձնաշնորհումներն անգին հովարտակները:

Ինչ կայ վարագործի ետեւ ծածկուած՝ որի ներքը չենք կարողանում թափանցել, իսկական իմանալ. սակայն և այնպէս չպէտք է բոլորովին պատասխանատուութեան ազատ ճանաչել Վեր. Յարութիւն Վ. ին, որ առանց դժբախտ ժողովրդի կամքն իմանալու գործած է մի անհրաժեշտ յանցանք, այնպէս որ նրա կէս դարի չափ արգասաւոր ծառայութիւններն պիտի նսեմանայ և աշխատութեան յարգը ոչնչանայ, ո՞չ միայն իր դժբախտ ժողովրդի առջեւ, այլ և նոյն իսկ անաղարտ պատմութեան դատաստանի հանդէպ: (*)

Կը յուսանք որ ներկային, Գերբիւրանիկ Թէրզեան Հայ-Կաթողիկոս Կաթողիկոս Հոգեւոր Տէրն, որն որ ազգասիրութեան մեծ համբաւ մը կը վայելէ, այս կորուստը կը վերանորոգէ: Ազգը և ազգային դարերէ ի վեր ունեցած հաստատութիւնքն և կալուածքը օտարաց ձեռքէ կ'ազատէ:

ԱՆՅՈՐԴ

Սպահան, 1 հոկտ. 1910

ՈՒՐԻՇ ԾԵՂԵԿՈՒԹԻՒՆԲ ՊԱՐՍՎԱՍԱՆԵՆ

Տըլուր լուր մը. Գեր. Յովսէփ Վ. Խիւսապէրտեան, 'քիիկ Ուրմեղի, ուսեալ ի Հռովմ', 29 տարեկան երիտասարդ Հայ:

(*) «Անցորդ»ըն պու պատմութիւնն տալով, այնի բոսթա իւլ պիղգաթ Գեր. Յարութիւն Վ. Առաքելեանտան աւաղը մըզ վէ պու կրկնքի նիւթիմիւրալ տէրճ իթիկիմիւր մլըթուպըն միւստիթիմիւրալ թէքիւր օլընմըլտըր: Պիղիմ իւլն տէ իսնատալը վագրա հապէճա օլմազ կէրէք տիր. չիւնքի էլլի սնէսէն պիւրա էօյլէ պիր մահէլտէ Գիլիտիսին վէ Միլլիթիւն չալըմըլ օլան վէ պու կրկն 80 եալընտա օլտըրը հալտէ էլան չալըմագտա պուլընտա պիր լահիւր միւսթէրէմի՝ էօյլէ պիր գալէմ ունուլա տէրհալ թէնգիւր վէ մուսալէն իթիմէք՝ մուվաթըրը հազգանիթ օլմազ: Էլլի սնէլիք անվալի արիւր ու ամիւր թէտգիւր իթիւլի, անլամալը. էլէրիլ միւստիթիւր, պաղը սրալարտա հազգընտան վէ սաթիւտէն էլլէքիլ իսէ պիլէ, քիմ պիլըր նէ կիպի անվալ վէ վէգալի սրաւսընտա, վէ հիշ պիր թարափտան պիր կէօնա մուսալէնէլ, եարտըմ պուլմամտըրըն տան մէջպուր օլարտը, պուսա իսթէր իսթէմէզ գալիւնմըլ տըր, նաթըլ քի պու կրկնքի մէքիթուպընտան տա պուրաւը ալէքեարէն անլալըլընտա: (Մեքնուա)

սանա պագմատողլարը թէհագգուգ իսէն
իւսնան էրդպպընըն մուլեինսիլլիբէրի
դալիլ օլուրւ» (Դասպուլ)

ᐅᐅ.	ᐃᐅ.	ᐅᐅ.	ᐃᐅ.	ᐅᐅ.	ᐃᐅ.	ᐅᐅ.	ᐃᐅ.	ᐅᐅ.	ᐃᐅ.
1876558	200000	1137170	1500	513188	1000	1268065	1000	1646467	1000
1460418	4000	1200559	"	542559	"	1350386	"	1646470	"
1572047	"	1234280	"	800492	"	1350389	"	1674543	"
54539	1500	1580246	"	846339	"	1376359	"	1713803	"
162178	"	1819287	"	1096218	"	1391333	"	1768924	"
277050	"	121426	1000	1114406	"	1407745	"	1789712	"
575337	"	171054	"	1152543	"	1425288	"	1722323	"
635804	"	179337	"	1162323	"	1545039	"	1834726	"
962885	"	210320	"	1177943	"	1601022	"	1853808	"
1030803	"	330861	"	1214655	"	1615569	"	1896477	"